



U. U.

“ԱՆՔԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ”

Վ Է Պ

ԳՐԻԳՈՐ ԷՅԻ ԶՈՂՐԱՊԻ

Արդէ հայ գրականութեան կայուն, եթէ ոչ յետադէմ վիճակին մէջ, կարելի միայն թարական դէպք մ'է Գրիգոր Էֆէնտի Զոհրապի վէպը, Անհետացած Սերունդը, որ շարժումն է հրապարակ կ'ընէ, Հրանտ Էֆէնտի Ասատուր, իւր գրական գեղեցիկ տեսութեամբ որ այս սիւնակաց մէջ հրատարակուեցաւ, խորագրաց շնորհով կը հաստատէր հայ գրականութեան այդ տխրափոթ կացութիւնը: Սակաւաթիւ հայ գրողներն որք երբեմն լուսատու շողերն էին այդ գրականութեան, նկուն ու յուսահատ քաշուած են հրապարակէն, եւ մեր բոլոր դժբախտութիւնը դրել է ամբողջովին կեղբոնացած է լրագրաց ու պարբերական հրատարակութեանց մէջ, որք բնաւ չեն կրնար ընդ դասական մատենագրութեան մը պակաս, օրն օրին կարգացուելու — եւ մոռցուելու — սահմանեալ լինելով: Պատեհչին վրայ այնքան քիչ հոգի մնացած են, եւ անոնք իսկ, որք արիւղայնները կը կարծէին, կը մեկուսանան ասպարէզէն: Առանց բազմաթիւ օրինակներ առաջ բերելու, յիշենք միայն զՏիկին Տիւնար, որ մեր գրականութիւնը սնունդէ յետոյ երեք փուլերով, լրացած կը համարի իւր պաշտօնն ու կը խորհի մէկզի նետել գրիչն, երբ ամեն ոք այնքան յուսալից կ'ստանայ աւելի շողուն գոհարներու: Արդարեւ, Մայրայէն յետոյ Սերունդը յառաջդիմութիւն մ'էր, եւ այս երկուքն յետոյ Արաքսի մեծ քայլ մը դէպ ի կատարելութիւն: Արաքսի երկ մ'էր աւելի կենդանի, աւելի բազմազան, աւելի զգացմամբ գրուած: Տիւնարներն էին աւելի ճշգրտօրէն նկարուած, զգացումներն աւելի հոգածութեամբ ի յայտ բերուած, միջավայրերն աւելի խնամով պատկերացուած: Ուստի որքա՞ն մեծ եղաւ մեր զարմանքն երբ կարդացինք Արաքսի ձօնին մէջ, թէ Վսեմ Տիկինը մտադիր է քաշուիլ գրական ասպարէզէն, ուր մենք կ'ստանանք տեսնել նորա նորանոր գաւիթները պըսակուիլը:

Մասին յարատեւ ընթերցողաց մտքին մէջ խորաքանդակ դրոշմուած է անշուշտ Անհետացած Սերունդը վէպը, որ մաս առ մաս հրատարակուելէ յետոյ այժմ գրքի ձեւով ի լոյս կ'ընծայուի: Գրիգոր Էֆէնտի Զոհրապ թէեւ առաջին անգամ կ'ընէ հայ գրական ասպարէզին մէջ, այլ նոյն հետայն կը գրաւէ անդ կարեւոր տեղ մը: Ի վաղուց հետէ հրատարակուած չէր գիրք մը այսքան ճորտ ու այսքան ճշգրտական: Այդ վէպ մոռցնել պիտի տայ բազմաց շատ կսկիծներ զորս ունեցած են հայ գրականութեան աղքատութեան վրայ: Գրքին մէկ ծայրէն միւս ծայրն, հեղինակը կ'երեւայ մեզ առաջնակարգ վարպետ մը որ կը ներկայացնէ մեզ կեանքն իւր: մանրակրկիտ ճշդ ութեամբ, եւ ամեն երեւոյթներուն ներքեւ:

Յրանաացի շնչանաւոր գրադատ մը ըսած է թէ լաւագոյն վէպերն անոնք են որոց նիւթը կրնայ ամբողջութիւն երկու տողի մէջ: Անհետացած Սերունդին հիմն ալ պարզ է: Երիտասարդ մը կը սիրահարի ամուսնացեալ կնոջ մը զոր ուխտած էր ատել յաւէտ, — ըստ որում սիրադրուժ գտնուելով

երիտասարդին ամենասիրելի բարեկամին՝ նորա խելագարման ու մահուան պատճառ եղած էր, — ու ամուսնոյն մահուանէն յետոյ կ'ամուսնանայ նորա հետ եւ կ'ապրի մենութեան մէջ: Այս կամարքին վրայ, հեղինակն ինչ որտաղբաւ ու որտայոյզ վըրուադներ յօրինած է, ինչ այլազան ու հըրաշալի պատկերներ աւելցուցած է:

Անհետացած սերունդն է այդ երկու երիտասարդներն եւ երրորդ մը, որ անոնց ընկերն եղած է Բերայի իրաւարանական ու երկրաչափական վաղամեա Համալսարանին մէջ: Անոնց ուսանողական կենացն կարաւորութեամբ կ'սկսի վէպը, ուր հեղինակն ըստ հաճոյս խառնած է իւր պատանեկութեան խորախուլից ու տխուր յիշատակներն համըռն: Նրեքն ալ առանց ընտանիքի ու առանց ստակի երիտասարդներ են ու զուարթ փրկութիւն յուսովեմբ կուրծք կուտան բախտին ամեն դաւնութեանց: Անոնց անունն է Սեդրաք, Տիգրան եւ Սոփիոյ, երեքն ալ միացեալ ամենատարած կապերով: Առաջինն երկրաչափ կը լինի, երկրորդը փաստաբան ու երրորդը գաւառոր: Սեդրաք, ընտանեկան յարկին մէջ իրեն զլացուած սէրն ու գորով կը գտնէ ծաղկաւոր աղջկան մը վրայ, Սոփիոյ՝ ընկերուհին իւր մանկական տիոց, ու վերջէն կարենալու համար զնա կ'նստնան խնդրել, Ատանա կ'երթայ իւր երկրաչափ, գերմարդկային ճգերով կը ջանայ հասնիլ այն զիրքին որ կարենայ բաց ճակտով վերադառնալ ի Պոլիս եւ իրականացնել իւր երազն տարիատեհչիկ, կ'իմանայ ամուսնութիւնն այն էակին զոր կը սիրէր կենաց գառնութիւններով լցուած խանդակով սրտին բոլոր զօրութեամբ, Պոլիս կը վերադառնայ եւ Ս. Փրկչի Հիւանդանոցին մէջ, աշխարհի վրայ ամենէն աւելի սիրած մարդուն՝ Տիգրանի կուրծքին վրայ կը մեռնի խելակորույս:

Հեղինակն ամենէն աւելի խնամօք ներկայացուցած է Տիգրանն, զաւակ անծանօթ ընտանեաց, նախ ճիւղնոտ ու մեղամաղձոտ, սրտափակ ու գլխահալ տղայ մը, յետոյ ուսանողական կենաց ու Բերայի կենցաղոյն աղքատութեամբ սրտի մօտ, հըպարտ ու զուարթ երիտասարդ մը, հոգի սիրախանդ նման բոլոր անոնց որք իրենց մանկութեան մէջ սնած չեն ընտանեկան գորովով իւր միջնորդութեամբ: Փաստաբանական ասպարէզին մէջ իւր տաղանդով ու ճարտկութեամբ շուտով կը վաստի վաղաժամ այլ արդարացի համբաւ ու հարստութիւն, սակայն Սեդրաքի տղեկիցիկ մահուան վըրայ, թախծալից ու մեղամաղձիկ, հետի կ'ապրի ընկերային ամեն զրօսանքներէ՝ մեռնութեան մէջ խելագարով իւր հետայոյզ հոգւոյն բոլոր խանդն ու աւիւնը, երբ գիրքն մը երեկոյթի մը մէջ կը պատահի այն կնոջ որ անուղղակի պատճառն էր եղած իւր կենանքին խորտակման: Կ'իւրծէր գտնել ի նա կին մը ռամիկ հոգւով ու տկար մարմով որ ընկերային բարձր աստիճանի մը հասնելու համար ջարդ ու փշուր ըրած էր իւր սրտին թելերն, եւ զարմանօք կը տեսնէ իւր դէմ զոհ մը ընկերային պատշաճութեանց, ոյր արտաքին վայելչածաղիկ գեղջն հաւասար է մտաւորական բարձր գաստիարակութիւնը: Սրտայոյզ ու բանաստեղծական տեսակցութիւն մը կ'ունենան: Ալ այնուհետեւ Տիգրան իւր անձին տէրը չէ՝ մութին մէջ ստուեր մը ի զուր իւր վրայ կը յառէ սպառնալից ու պաշտատգին աչքերն: Ի զոհ գիրքները կը վրդովուին խօլ երազներով որոց մէջ ուրուական մը, սնչուք հողակոյտէ մը բարձրանալով, կը յառնէ իւր

դէմ տրամաշայեաց: մտքին մէջ ի զուր կը փոխորկին անցեալ աւուրց բա՛ղջը յիշատակներն: Եւ յաշարհի վրայ ամենէն աւելի սիրուած էակի մը յիշատակն անգոսնելու խղճի խայթն ի զոհ կը տանէ սիրտը: Կը սիրէ այդ չքնաղ կինն, ոյր վրայ գտած է այն կատարելութիւնն որ իւր պատանեկութեան երազոց առարկայն եղած են: Նախ գրական զբաղմանց եւ ապա շուտոյց փոխութեան մը մէջ կ'ուզէ խելագար այդ հրայրքը: չի յաջողիր: ու ձմեռ ատեն կ'երթայ բնակիլ ի Պէօյլեքէքէ առանձին տան մը մէջ, իւր կրքին ու տանջանաց հետ մէջ միայնակ: Բաղդին բերմամբ, ամրան, զիւղազնացութեան ասթիւ գրացի կը լինի Սուրբիկի եւ նորա ամուսնոյն, կառավարական բարձրաստիճան պաշտօնատար որ ի սկզբանէ անտէ՛ դաւելին պէս կը սիրէ այդ տաղանդաւոր երիտասարդը: Մտերմութեան կապերը եւս բան դեւս կը զօրանան եւ երբ մանկամարդ կնոջ ամուսինն, սքանչելի տիպար մը արդարա՛րօք ու խոհական մարդ ու, մահուան անկողնէն կը խնդրէ Տիգրանի չընաւել իւր կինն եւ զաւակներն յետ մահուն, երիտասարդ փաստաբանը, կրքէն ու շարժարանքէն վաստակաբեկ, մենութեան մէջ կ'երթայ թաղելի տարիանքն ու խղճի խայթն այն երկից պաշտեցեալ կնոջ հետ, միջադէմ պատկեր անցեալ յիշատակաց, սխալի՛ կուր իւր խանդակով սրտին:

Նրեք երկ տատարդաց ամենէն նուազ համակրելին է Սոփիոյ, գաւառացի տղայ Պոլիս եկած մէն միայնակ, կանուխէն վարժականաց ամենէն գժուճ նուաստութեանց աղկից սրտին մէջ սնուցած գառնութիւն աշխարհի ամեն երանութեանց դէմ ու անզուարէ անգիմադրելի տենչ մը հասնել անոնց որոց վրայ նախանձած է գառնութեամբ շուտով կարեւոր տեղ մը կը գրաւէ նախ գաւառացական ասպարէզին ապա վարչային պաշտօնէութեան մէջ: Այնուհետեւ ամեն միջոց յարմար կը հասնի բարձրանալու դէպ ի վեր: Կ'ամուսնանայ հարուստ այլ անուանարկ գեղանի տաղանդ մը հետ որ ատենօք հայրենի տունէն փոխած է երիտասարդ գաւառացի հետ, եւ ազգային գործոց մէջ կը մտնի յորդեանդն՝ այդ դիրքին կուռնին վրայ կարենալու համար ձեռք բերել, շատերն նման, պաշտօնի բարձրացում, պատիւ եւ համբաւ: Այլ լպիրշ ցոփութիւնքն իւր կնոյր իւր բոլոր գեղեցիկութիւնն ու կնայ բնագիւղերը կը գործածէ տղարտելու քտանի յարկն եւ որ վերջ ի վերջոյ խոյս կ'տայ խուսափ սպասաւորի մը հետ, Արգային ժողովոյ մէջ կորակոր պարտութիւն մը եւ ի գերեւ ելնելն իւր բոլոր թաղաքի զիտաւորութեանց, Պորսային մէջ կորուստ եւ այս ամենուն հետեւանօք պաշտօնական կութիւն եւ սնանկութիւն կը քայքայեն այլ մարդն, որ օր մ'ալ կ'ընէ կ'երթայ Պոլսէն, առանց գիտցուելու թէ ո՛ր:

Աւասիկ այդ անհետացեալ սերնդն պատմութիւնն, զոր սպարդ եւ սրտայոյզ կը կոչէ Զոհրապ Էֆէնտի: Սրտայոյզ, այդ բոլորովին սրտայոյզ, աչքից արցունք բերու եւ սրտից՝ հառաչներ խելու ջարտայոյզ, բայց ոչ բնաւ պարզ, այլ ընդ հակառակին խառնուած Պոլսոյ ատօրէն կենաց բոլոր պատահարներով ու եղբայրութեամբ, որովհետեւ ամեն բան կայ այդ գրքին մէջ, 200 պատկեր այդ 200 երեւոյթներուն մէջ: Գրքէ շաղկապ մը քով կայ Ս. Զոհրապի ծոցով մը կ'ուրանա եւ յաղմուկ

ճշգրիտ նկարագրող թիւերը, հարսանիքի մը
հետեւէն խռովայող թաղում մը, Պալազը
գերեզմանատունն եւ Ս. Փրկչի յիմարանոցն,
կրօնական սոյնքար մը խռովանիւն կողմէ եւ
պերճաւորալ երեկոյթ մը բարձր դասու ըն-
տանեաց մէջ, Մէտտարհանէի բանտն իւր
ամէն արհաւիրանք եւ Արարատեան ընկե-
րութեան պարահանգէսն իւր ամեն շուքով,
սիրահարաց մենիկ ճաշ մը լուսնի լուսով
(գրքին ամենէն գեղեցիկ էջն, բայտ իս) եւ
օրհասականի մը վերջին հոնդիւններն մահ-
ուան անկողնոյն վրայ, եւ այս ամենն օրի-
նականաւ, գոցցեալ լուսանկարուած իրա-
կան կեանքէն:

Գաւլով ոճին, Ջոհրապէս Գեղեցիկ բնաւ
ճիշտ չգտար արտայայտելու համար իւր
այլադան գաղափարներն եւ նկարագրելու
համար իւր պատկերները: Բայց իսկապէս
եւ ճշգրտութեամբ կը սահին միմեանց ետե-
ւէ, լիովին բացատրելով հեղինակին միտքն
ու հոգին:

Ըսենք միանգամ ընդ միշտ, Գրիգոր
Գեղեցիկ Ջոհրապէս վէպն առաջնակարգ երկ
մէ, եւ վստահ ենք թէ հեղինակին պիտի
տայ պրական մեծ համբաւ մը, ամեն մա-
սամբ արգարացի: Երանի՜ թէ երկտա-
սարդ փաստաբանն, իւր ծանրածանր
գրադմանց մէջ տեղ, տալիս ունենայ հետ
զնեւէ ճոխացնելու արդի հայ վիպասա-
նութիւնն իւր երկերով: Դատ խտտապա-
հանջ չենք, տարին վէպ մը կը բաւէ մեզ:
Իրաւ է թէ փոխարինութիւն մը չունի մեր
պարբերական գրականութիւնը, սակայն նոյն
իսկ ընդհանուր գոհունակութեան միմունջ
մը եւ մանաւանդ իւր սրտին ու մտքին
բոլոր յոյզերն ու բոլոր տենչերը գրքի մը
էջերուն մէջ գնելու պէտքն իսկ բաւական
թիւն մը չեն մըլելու զինքն շարունակել
այն ասպարէզին մէջ, ուր այնքան փայլուն
սկզբնաւորութիւն մը կ'ունենայ:

Լ. ԲԱՇԱԼԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Մեր ընթերցողը սովորած չեն ուրիշ լը-
րագրաց դէմ յօդուածներ կարգաւ: Արդա-
րեւ կան թերթեր որոց պատասխանել մտա-
քէ անգամ կարող չենք անցնել: Բայց նոյն
խորին արհամարհանք չենք կարող գալ Ա-
րեւելեան Մամուլ համար որ թէպէտ մի քանի
տարիներէ ի վեր հայհոյելու, նախատելու
մասին ոչ ումեք յետամնաց եղած է, բայց
կը նկատենք զինքն իր միւրեւել մը: Ար-
դարեւ, երբ թերթի մը խմբագիրն ունի
այնպիսի մեծ գրական տաղանդ մը, որ
պիտի է Մամուրեան էֆ.ի տաղանդն, չենք
կարող ըմբռնել թէ ինչու այդ թերթը լեց-
ուի այնպիսի տարօրինակ յօդուած-
ներով ոչ սեփականութիւնն են այն ան-
ձանց որոց զլուխը դատարի է: Ահա՛ Արե-
ւելեան Մամուլ Ապրիլի ամսաթիւնն որոյ մէջ
Պատրիարքի հրաժարականին առթիւ Մա-
մուրեան էֆ. մի յօդուած գրած է. այդ
յօդուածի մէջ յայտնուած գաղափարներու
կարելի է համակարծիք լինիլ կամ ոչ, եւ
սակայն կարծեաց ազատութեան ամէն ան-
կեղծ բարեկամներ կրնան յայտարարել թէ՛
այդ յօդուածը մի գլուխ գործոց է որոյ
ներքեւ կարող է ստորագրել Ներսիսեան ո՛ր
է նշանաւոր հրապարակագիր: Հասարակաց
Պարծեաց ի մտոյ տեղեկանալու առիթներ
չատ ունինք. արդ ամէն ոք այդ յօդուածն
հրճուանք կարգացած է: Պէտք է ըսենք
այդ ոճով գրուած յօդուածները կարող

են Արեւելեան Մամուլ վերադարձնել իւր նախ-
կին դիրքը: Մի քանի տարիներէ ի վեր հա-
սարակաց կարծիքն յոյժ աննպաստ էր Ա-
րեւելեան Մամուլ, ոչ թէ յայտնած կարծիք-
ներուն համար այլ յայտնելու եղանակի
մասին:

Արեւելեան Մամուլ վերջին ուղղութիւնն ի-
րական ցաւ մը պատճառած էր ամէն անոնց
որք այդ թերթի մէջ կենդանութիւն ներ-
շնչող, ոգեւորեալ յօդուածներ կարգաւ
չերմապէս փոփառող էին: Նոր հասած
գրագէտ երիտասարդութիւնը խորին յար-
գանքով պէտք էր ողջունել այն անունն որ
գրած էր Սեւ Լեւոն Բարսեղ, եւ սակայն ցըր-
տութիւնը կը տիրէ:

Յիշատակ մը յառաջ բերենք: 1877 թէ
78 թուականին էր, լաւ չեմ յիշեր, Արե-
ւելեան Մամուլ կարող չ'եղաւ շարունակել
իւր հրատարակութիւնը եւ մի քանի ամիս
դադարած մնաց: Այդ միջոցին մի քանի
երիտասարդներ միացանք, որպէս զի Արե-
ւելեան-Մամուլ շարունակութիւնը ձեռք բե-
րենք: Մեր ձեռնարկը յաջողութիւն զը-
տաւ: Արեւելեան-Մամուլ ունեցաւ բազմա-
թիւ բաժանորդներ եւ այն օրէ ի վեր ան-
խափան շարունակեց: Նորէն հրատարակուիլ
սկսող ամսաթիւերին առաջին թուոյն մէջ
Մամուրեան Գեղեցիկ համակրանք չորհա-
կալութիւն կը յայտնէր մեզ՝ յիշելով յա-
կանէ յանաւանէ: Այս յիշատակն առաջ
բերելով նպատակս այն չէ թէ՛ ցոյց տամ
որ ես անցեալի մէջ ծառայութիւն մատու-
ցած եմ Արեւելեան-Մամուլ, եւ թէ նա ինձ
հետ այնքան ամարգի վարուած է: Նպա-
տակս այն չէ որ մատուցուած ծառայու-
թիւն մը երեսի տամ, եւ նպատակս այս
չը լինելն այնքան յայտնի է, որ կ'ըսեմ թէ
այդ յանձնաժողովին թէպէտ մասնակից
բայց ոչինչ կրցայ ընել, վասն զի նիւթա-
կան աշխատութիւններ պէտք էր ընել, եւ
եւ շատ ընդունակ չէի այդպիսի աշխա-
տութեանց, հետեւաբար ոչինչ ըրած եմ
Արեւելեան-Մամուլ համար, ուստի ազատօրէն
կրնամ այս դէպքն յիշել: Այդ եթէ կը յի-
շեմ զայն, ցոյց տալու համար է թէ՛ Մա-
մուրեան էֆ. իրեն ջերմապէս համակրող
երիտասարդութիւն մը ունէր իւր հետ:

Այդ երիտասարդութիւնը հետզհետէ
ցրտացած է իրմէն, եւ նոր պատանիներն
ալ այլ եւս համակրանք չեն յիշատակեր
Մամուրեան էֆ.ի անունը: Պատճառն —
Պատճառը պարզ է. նախ՝ Արեւելեան Մամուլ
այն ոճն, որ ոչ միայն անպայել է ինքզինքն
յարգող խմբագրի մը, այլ նաեւ անհաս-
կանալի մեր արդի բարեկիրթ եւ քաղա-
քավար բարոյց, եւ ապա, եւ այն ամենէ
գլխաւորն է, Արեւելեան-Մամուլ գոյնազ-
րանքներն ջախջախելու այն բարձր անձնա-
ւորութիւններն, ինչպէս Ներսէս, Խրիմ-
եան, ոչ մեր ազգին յոյժ: Ահա՛, հա-
ւատքն են: Ի հարկէ մի Ներսէսի, մի Խը-
րիմեանի դէմ ժայթքած նախադիմաց
քան կը վնասեն նոցա, որքան մի քանի
դոյլ ջուր եթէ նետուի կրանիդէ արձանի
մը վրայ՝ զայն քանդելու նպատակաւ Ներ-
սէս, Խրիմեան կը մնան միշտ տաք, կեն-
դանի ամեն հայ արտերու մէջ, եւ սակայն
այդ սրտերը կը պաղին անոնցմէ, որք կ'ու-
զեն ազգին հոգին սպաննել Ներսէսի, Խը-
րիմեանի թշնամին հայութեան ոգւոյն հետ
կը խաղայ: Եւ երբ այդ գէնքերը բաւա-
կան չհամարելով Արեւելեան Մամուլ կը ջա-
նայ ուրիշ ճանապարհներով Խրիմեանի վը-
նասել, ի հարկէ շատ փափկասիրտ չ'ենք
կրնար լինիլ:

Այս մի քանի խօսքերով պարզապէս ու-

ղեցի յայտնել թէ՛ առանց թշնամական ոգի
ունենալու Արեւելեան Մամուլ դէմ պաղու-
թիւն մը, ցրտութիւն մը կը տիրէ անոր
նկատմամբ: Եւ այդ ցաւալի է: Մենք երի-
տասարդքս ո՛րքան թշնամանք տեսներ, ո՛ր-
քան նախատինքներու հանդիպինք, այնքան
աւելի գոհ կը մնանք, վասն զի կ'ուրեւ եւ
յաղթելու ասպարէզ կ'ունենանք. սակայն
նոքա որք արդէն բաւական կ'ուրեւ են,
որք արդէն մեծ ազդեցութիւն ունեցած
են ազգային գրականութեան վրայ, նոքա
իրենց ձեռքովն մէջ գործվանաց, խան-
դապատանց կը կարօտին: Արքան սքան-
չելի տեսարան մը պիտի լինէր եթէ գրա-
կան նոր սերունդն իւր իւր հայրապետն
մեծարէր այն կորովալիր գլուխն որ Սեւ Լե-
ւոն Բարսեղ եւ Հայկան Նաճակն ծնած է:

Մենք որ գրականութեան մէջ ամենա-
ջերմ բարեկամ ենք ամէն նորեկներու, որ
կ'ընենք ինչ որ կարելի է ընել զանոնք քա-
ջալերելու, ի հարկէ մեր սրտին համար միշտ
գաւն եղած է բազմաթիւ գրագէտի մը
համար սառուցեալ զգացումներ տածել:
Այդ պատճառաւ է որ խիստ քիչ անգամ
ակնարկութիւններ ըրած ենք Մամուրեան
էֆ.ի: Ի հարկէ կարելի չէր պահանջել որ
ծախահարենք ժայթքած հայհոյութեանց
փոխարէն, եւ սակայն անոնքն են փա-
փաքող որ Մամուրեան էֆ. թողու իւր հե-
տեւած ընթացքն եւ իբր գլուխ հոյ գրա-
դէտներու եւ հայ հրապարակագիրներու
պարզէ այնպիսի գրօջակ մը զոր յարգանք
ողջունենք ամէնքս ալ ո՛րքան ալ տարբեր
կարծիքներ ունենանք:

Կը փափագէի միանգամ ընդ միշտ խօ-
սիլ Արեւելեան Մամուլի անցեալի վը-
րայ եւ Մեքսիկոյ եկ Սրբազանի նկատմամբ,
բայց այժմ Մամուլի խմբագրութիւնը թող-
ւով, եւ այսօր ալ պատրաստ չ'իմեղով կը
վերապահեմ ուրիշ առթի մը: Միայն թէ
Մայիսի Արեւելեան Մամուլ Դահուրի այն
տողերն թէ Մամուլ չհամակրիր Մեքսիկոյ եկ
Սրբազանի, իսկ Մեքսիկոյ եկ Սրբազան կը
համակրի Մամուլի նոր ուղղութեան, մեզ
անըմբռնելի են: Մենք բնաւ Մեքսիկոյ եկ
Սրբազանի դէմ մասնաւոր հակակրօթիւն
մը չենք ունեցած: Դեռ անցեալ տարի Մե-
քսիկոյ մէջ կը գրէի որ եթէ Մեքսիկոյ եկ
Սրբազանի բարեկամներուն վրայ լաւ հա-
մարում չունինք, կ'ըսենք նաեւ թէ նոյա
անձնական թշնամիներէն շատերն ալ ստորին
արտածներ են: Իսկ Մամուլի ուղղութեան
գալով իմ ուղղութիւնս եղած է այն ինչ որ
եղած է միշտ: Ո՛ր որ ալ ո՛ր թերթ երուն
մէջ ալ գրած լինիմ, բնաւ հակասական
չեմ: Մօտ տասը տարի է կը գրեմ, ցրած-
ներէս օրինակ մը չունիմ քովս, բայց կարե-
ւի չէ երկու տող գտնել գրած ընդհանր
տողերուս մէջ որ միմեանց հակասական լի-
նին, «է» միշտ նոյնն է: Մամուլի արդի ուղ-
ղութիւնը կարծեմ կատարելապէս կը հա-
մապատասխանէ կովկասի զայրոցական
խնդրոյն մեջ երեւցած ոգոյն (*):

Ա. Ա.

(*) Մամուրեան էֆ. ինչ որ կ'ուզէ թող գրէ
մեզ համար, այդ մեր փոյթը չէ. բայց փոփառելի
էր տեսնել թէ ի՞նչ պիտի գրէ իւր սիրելի փափաղ-
եաններուն համար որք կ'աթողիկոսական խնդրոյ առ-
թիւ ազգավաճառ, դուռնան եկեղեցւոյ, մասնիչ,
զաղաւաղներ անկանները ազգին գործոց գլուխ գըտ-
նուող անձանց շուայլէ վերջ, այժմ կը հոգեւոր զնո-
սա ՀԱՅՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ եւ անոնց առաջ ծնրագիր
ձեռքերն վերամբարձ, գլուխին բաց «Տէր մեղայ,
Տէր ողորմեա» կը գոչեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔ

ՀԱՅ ԳԻՒԳԱՅԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Լաւ կազմ, առողջ մարմին մը ունին մեր գիւղացիները, ու գուցէ անոր համար, որ բնական ընտրութենէ մը անցնելով՝ քաջա-
ռողջ եղողները միայն կեանքի մէջ կը մըտ-
նեն. ապրելու տեսակի պարզութիւն ու
չարքաշութիւնը շատ կ'օգնեն մեր գիւղա-
ցիներու մարմնային բարեկաւութեան, բայց
աղքատութիւնն ալ իր գէշ տեսակի վնաս-
ներն ունի:

Այն զարգացումը չունին մեր գիւղա-
ցիներու մտային ոյժերը, զորս կարելի ըլ-
լայ համեմատել անոնց բարեկազմութեան
հետ. ձրի պարագաներու մէջ բան մը չ'ըս-
տեղծուիր, ու մեր գիւղացիներու միջա-
կային ու կեանքի պայմաններն ալ մտքի
տածում մը չեն արտադրեր ամենեւին: Մեր
Առաջնորդներու կողման մեծ մասն անոր
մէջ կը կայանայ, որ իրենց վրձակի գիւղե-
րու մտաւոր կեանքով, հօգնել գրադին, բայց
կան մէկ երկուք ալ զորեւ կը ճանչեմ, որք
գիւղացիի միտ ու մորթը, ճարձքը բերթել
միայն գործ ըրեր են իրենց ու կը գովուին.
գովեստներ կան բարեբաղդ արար, որք վի-
ժած մտքեր են ու տեսակ մը պատիւ, որ
ջրգողութիւն է:

Բեղուն միտք մ'ունին մեր գիւղացիներ-
ը, ու ամեն տեսակ ընդունակութիւններ-
ով օժտեր է զանոնք բնութիւնը, բայց
սաղմնային վիճակի մը մէջ կը մնան բոլոր
այս ընդունակութիւնները ու չ'են շահա-
բերուիր. նեղ, շատ նեղ է հիմայ մեր գիւ-
ղացիներու հոգիի շրջալորը, — անցեալը
կը յիշեն, ներկայն կը զգան, ապագայն
Աստուծոյ կը թողնեն, այս ամենը մեքե-
նական ու հէքեթի մեղով:

Իրաւ է որ ճգմեր, շատ ատեն տրորեր
է ոյժն մեր գիւղացիներու կեանք ու գոյ-
քը, բայց ճնշումի կրկնութիւնները՝ համրե-
րող ըրեր են զանոնք. կրօնը խիղճ տուեր
է մեր գիւղացի հայերուն, կենցաղի խնա-
տութիւնները՝ համբերութիւն, եւ այս
պայմաններու ներքեւն ալ հանդարտիկ ժո-
ղովուրդ մը կարելի է նկատել հիմա մեր
գիւղացի քաջերը:

Աը պաշտէ գիւղացի Հայն իր տուն ու
երկիրը, եւ սրտի ու մտքի թերափներ ունի
այն տեղ. բայց այն վիճակն ալ կ'ունենայ
շատ ատեն, որ կը հեռացնէ զինք իր հայ-
րենիքէն. կեանքի ու մահի խնդիրները
կրնան բաժնել, այո՛, գիւղացի մը իր երկ-
րէն ու ընտանիքէն, բայց բան մը չ'կրնար
բաժնել զանոնք անոր հոգիէն. արտառուչ
են մեր գիւղացիներու բարեւադրերը, ու
լեզիւ՝ այն մահը, որ օտար հողի մը մէջ կը
թաղէ զանոնք:

Խեղի շատ ոյժ չունին մեր գիւղացի-
ները, եւ բիրտ ոյժը ձեռք կ'առնեն իրենց
գործառնութիւններու մէջ, իրենց ամեն
անկումներու մէջն ալ տոկոսնութիւնը:
Ճիշդ է որ շատ բան չ'արժեր բիրտ ոյժը,
բայց տոկոսնութիւնն ալ կեանքի այն մո-
լան է, որ անվահեր կը պահէ միշտ մեր
գիւղացիները. բիշ բիշ ստացեր են մեր
գիւղացի Հայերն այս տոկոսնութիւնը, եւ
ժամանակն ու իր դէպքերն ալ սովորու-
թեան ու յետոյ բնութեան փոխարկեր են
զայն. բայց վերջապէս պէ՛տք է համբերել

ու տոկոս:

Հին ու նոր կեանքի միատեսակութիւն
ու զանազան նախապայտումներն, այս-
պէս ըսեմ, ճակատագրի փոխեր են մեր
գիւղացիներու համբերութիւնն ու տոկոս-
նը, եւ իրօք ալ ճակատագրական են գրե-
թէ մեր գիւղացի Հայերը. առանգութիւ-
նով կ'ապրին արդէն հիմա այս խեղճերը,
եւ նոր բան որ նորութիւն մը չը յաղեր
գիրենք:

Նթէ ուրիշ կոյր կազմ մը կայ մեր գիւ-
ղացիներուն մէջ, այն է որ շատ փար կը
նկատեն գիրենք ու բանի մը չեն գիտազը-
բուեր. գուցէ ասոր պատճառը նեղու-
թիւնն է, բայց ասոր հետեւանքն ալ այն
եղեր է որ թէքունութիւն մը ստացեր են
հիմա մեր գիւղացիները. կը թէքունին, կը
ծռուին, բայց չ'են կտորիր. կը ճնշուին ու
զուրս չ'են տար իրենց կաշիի բոլոր եղը:

Հանգամանքներ ունին մեր գիւղացիներ-
ը, զորս իրենց միջավայրը ստեղծեր է.
Հանգամանքներ ալ ունին, զորս իրենց
պատմական կացութեան պատճառով կա-
րելի է համարել, եւ այս երկու տեսակի
հանգամանքներն են, որք մեր գիւղացի
Հայերու կեանքի խորհուրդը կը կազմեն
այսօր:

Յ. Մ. ՏՈՒՏՈՒՆԵԱՆ

10 Յունիս 1887
Բերա

ԶԲՕՍԱՆՔ

Ջէօանէ բառն հրապուրելի է ամեն պայ-
մանի եւ կարգի անձանց. ծերունայն անց-
եալ կենաց գգուելի յիշատակն է, երիտա-
սարդին խնդից եւ հրճուանաց ժամն, յո-
րում կը խառնուին՝ ոչ դուն ուրեք՝ խոր-
հրդաւոր պատկերներ. վշտաց մուսցու-
թեան պահն է, եւ մանկութեան սրբա-
ղոյն աւուրը յորս մարդ-ծաղիկը գարնան
ծաղիկները կը կոխտէ, ինչպէս մենք ի
ձմեռան՝ պարսիկ գորգերը. Անաց ամեն
բերկրութիւնը, Աստուծոյ գիւղական ա-
փանց վրայ պոռայ մը, իր սարաւանդա-
կացը վրայ ժպտուն հայեցում մը, սրտա-
կից մտերիմներով մի քանի ժամը խնդից,
զօռնա՛ բռնոտ կը սահմանուին: Մեր լեզ-
ուն մէջ կարի ընդարձակ խմայտով գոր-
ծածուած է. ժողովրդեան աշխարհիկ խօ-
սից մէջ մեզ սովորական, իսկ մեր բարձ-
րագոյն մատենագրաց ըով՝ զբաղանաց հա-
մանշանակ գրուած կը գտնենք: Եւ ըստ
այսմ՝ նա որ աշխատութենէ խոնջեալ կա-
նաչաղեղ սարաւանդակաց վրայ կը ճեմէ,
զօռնա՛ կ'ընէ. նա որ պայծառ գիշերը՝
լուսնի եւ աստեղաց յառեալ՝ կը սքանչա-
նայ տիեզերաց այդ վեհ եւ անյարկ տա-
ճարին, զօռնա՛ կ'ընէ. երածիշան իր խա-
ղերուն եւ լարից հետ զօռնա՛ կ'ընէ, քեր-
թողն իր տաղերովը, թափած բաւերով եւ
արձակած հառաչանքն զօռնա՛ կ'ընէ:

Հաղա ինչ կ'ընէր Մաթի, որ Յունիս-
րէն սկսեալ ի ծերութենէ երիտասարդու-
թիւն փոխուեցաւ. մէկ կողմ բառ մի կը
նետէր. եւ միւս կողմ՝ անյարկ մի. տաղին
որոտում կը ձգէր, եւ անդին ուսմը մը կը
պայթնայէր: Աւուրքը յառաջ երգերու
եւ ազգային անուանց նուիրում մտը
զգայուն սրտերէ հառաչանք խնց եւ ան-
զգայնեան հանգիստը խոնգեց. երկու հայ
գէշերու լին հայրաւորը գէպի Հայութիւն

տակաւին շատ մթին սրտերու խոյլիցը պի-
տի ըլլայ: Ա՛հ, էին ասոնք. երիտասարդ
Մաթին զօռնա՛ եւ կամ զբաղանէ: Բայց
կ'ըսեն թէ անօրինակ արշաւանքներ կ'ընէ,
ո՛չ ձախ կը նայի եւ ո՛չ յաջ. Թերթի մը
զօռնա՛ց ուղղութիւնը ճշմարտութիւնն է
միայն. իր գրչին մալ հայեցումը՝ Ազգ
մը, որոյ ծոցոյն մէջ կը սնանի, եւ ժողո-
վրդեան օրական անկեղծ մտերիմն է: Արդ,
ինչ կ'արժէ թերթ մը, որ աղգային ան-
ուն ասի կը հրատարակուի, եւ՝ աղգային
ըլլալով՝ գրեթէ ոչինչ կը բովանդակէ. անօ-
րէնին առջեւ երկնազոծ հաւատացելոյ մը
պէս կը ծռի, եւ աղգային իրաւունց առջեւ
յանցապարտը կը շողորթի: Եւ կը գգուէ
չողովի շրթամբք: Զա՛րկ գլորէ սեւերեւ
ստութիւնը, ահաւասիկ երիտասարդ թեր-
թի մը փառքը: Գնցէ՛ բուռն ու ժգնութեան
թմրած մարմինը, ահաւասիկ իր իսկակի
կոչումը. մի՛ վախճար ժանտաւետի՛լ հայ-
ուածքէն, ահաւասիկ իր արժանապատու-
ութիւնը: Ասոնք եղան Մաթի զօռնա՛ն
յարմէհետէ իր աւելոր մտքերը թափեցան
եւ ընդ երացը մէջ սկսաւ բռնկիլ նոր կիլա-
նուտ տարրը, Երիտասարդութիւնը: Մաթի
թէ — քանի որ ս գլային նիւթ երն ու խնդի-
նեան անձնուէր ողւով պաշտպանեալն մի
միացած են մասամբ իւրիք — Մասիս ստոր-
տէն հաշտութեան ծխածան մը ձգուէր
Զմիւռնիոյ ծովածոցը՝ մինչեւ այն ծերու-
նին, որ արդեամբք եւ տիօք ծերացեալ եւ
ծայրացեալ՝ տակաւին երիտասարդի պէս
կը բռնկի, հա՛ւր հեր եւ բո՛ց մօրուս ունի:
Եւ այսպէս երիտասարդութիւն եւ ծերու-
թիւն իրերաց մօտենալով լրագրական հրա-
պարակի վրայ՝ մին փորձառութիւնը յար-
գած կ'ըլլայ եւ միւսն՝ մարթնայաւոր
վշտագին եւ նշխարեալ աւուրց մէջ:

Իսկ իմ զօռնա՛ն ինչ է: Արձեւալ ժո-
մանակէս եւ ընթերցմանէ դուրս թափթը
փած ժամերս թերթեւութեամբ գլորելու
համար՝ թերթ մը թղթին ճակատը զօռնա՛ն
բառը կը նշանակեմ եւ կը սկսիմ տարրացնել
կապոյտ քծերու վրայ ինչ որ գգամ նայ
պահուն, այս պայմանն առաջադրելով մի-
այն որ գրածս առհասարակ աղգային նիւ-
թեր ըլլան:

Նորաշէն եկեղեցւոյն նոր անուն. — Համեմատու-
թիւն երկու հոյակապ անձանց, մին հայ եւ միւս
յոյն. — պատիւ Մեծին Ներսէսի կաթնեալ եկեղե-
ցին. — Սըրանուէր անուան խաղին տակ եկեղեցի
վարժարան:

Յորժափի գլուխ գէպի ետեւ ծածկը
դիտեմ նորաշէն եկեղեցւոյն ճակատը, կը
նայիմ իր վեհ կամարին ու չքնաղ զարդա-
ցը վրայ. յորժափ կը յիշեմ որ այդ շինու-
ծոյն ծախքն հոգաց բարեպաշտ հայ մը ա-
ռատասիրտ հոգով. եւ յորժափ կը խորհիմ
որ հոն ծնրագործ հաւատացեալն՝ հայ ար-
դիկ մը, հայ աղջիկ մը, հայ երիտասարդ
մը, հայ ծերուկ մը եւ հայ ծնողը պիտի
ըլլան, չ'պիտի կարենամ դիւրաւ մոռանալ
որ ինչո՞ւ համար օտար սուրբին անուանը
տեղ՝ հայ սուրբի մը անունը չ'ըրուեցաւ:
Ինչպէս յամենայնի, նոյնպէս եւ այս մասին
եւս օտարումը երեւցած ենք. ահաւասիկ
ճշմարիտ խոստովանութիւն մի:

Առատանդուպոյտը լուսաւորչական Հա-
յոց եկեղեցեաց մէջ՝ հաղիւ երկու տեղ
նուիրած ենք Գրիգոր Լուսաւորչի, մինչդեռ
Իրանի համբիւ գուցէ տառնէն աւելի օտար
սրբոց անուանը կ'անդհաւ եկեղեցիներ:

Լսած եմ Յոյն հայրապետի մը անուանը նուիրեալ տաճար . թող որ ցարդ չզիտեմ թէ ո՛ր է այն եւ գուցէ այսուհետեւ չի վախճարիմ գիտել թէ ո՛ր կը բարձրանայ , ալ ոչ ուրիշ ունինք յանուն Մեծին Ներսիսի , Սահակ Պարթեւի եւ այլոց արժանաւոր հոգւոց անուանը նուիրեալ եկեղեցի : Մեր Սահակ Պարթեւը Յունաց Ոսկերեքաւնէն եւ ո՛չ միով իսկ իւրեւր պակաս չըլլալէն զատ , մեզ համար՝ բազում եւ բազմակիս առաւելութիւններ ունի . նախ իր ազգին արիւնն ունինք մեր երակացը մէջ , երկրորդ . որ անոր բոլոր եկեղեցական աստիճաններն ընդ առնած է . երրորդ Ոսկերեքանի արտաբանացը զէմ՝ ունի իր շղթայն , անոր հայրապետութեան զէմ՝ իր գաւազանը , անոր լեզուին զէմ՝ իր Աստուածաշնչին բարբառը , անոր ճարտարխօսութեանը զէմ՝ իր օսկի բերանը , ճարտարախօս սիրտն ու հոգին , զորս իր եւ իր աշակերտացը զոչաւ տարապայտած եւ մարմնացուցած է Յունին մեկնաբանական գրոց թարգմանութեանցը մէջ : Ըստ հասարակ կարծեաց լեզուաբանութեան , այն որբազան ճարտարախօսին Մատթէոսի Մեկնութիւնն ու Պողոսի Թղթերը բնագրէն առաւելութիւններ եւս ունին . յունական պարզ ասացումը՝ հայկականին մէջ ձեւաւոր կերպարանք ունի . մի եւ նոյն բառը՝ չորս հինգ անգամ փոխուած է համանշանակեցութիւնով : Սիսիայ թող զարմանալի չլինի մեզ . Ոսկերեքան յունական Ոսկեդարն ունէր իր առջեւ . Պղտատն իր Հառաբախապետութեանը զորածէր , Գրիսովէն իւր Փնկաշաններն ու Յազաթ Պապէն ճառը , իսկ մեր Պարթեւն իրմէ առաջ գրեւոր ոչինչ գրեթէ եւ կամ թերեւս չէր մտնէ , որ զայսոր անձանիք մնացած է . նա իր Ոսկեդարն մեծութեանը տակ ընկճեալ ու պարտեալ կը մնայ . սա՛ իր ազգայն սերնդեան Ոսկեդար մը կը կտակէ , այսինքն իր ազգային լեզուն այնպիսի կատարելութեամբ ընդ գրով կ'անցընէ , որ իր Աստուածաշունչ գրոց հետ՝ Հովնաթ , Գրիսովէն , Նարեկ եւ Ստեփաննոս իրենց գեղոյն ու մեծութեանն արժանաւոր լեզուաւ այս ր հայերէն կը խօսին չնորհա վարդապետի մը , որոյ աշխարհային կենացն ապաստանարան եղած է Աղբիւրական կղզեաց մին , իսկ հանճարոյն՝ հին եւ նոր Խաւիան , հին Աստիկէ եւ Գաղղիա միապէս պէտք եղած են :

Բուն խնդրէն շփեանալու համար՝ դատնալը . գուցէ հետեւեալ զբառը է հաւատարմի այսոր եւս ոյժ ունենայ . գուցէ մտածուեցաւ որ դարերով , յաջորդաբար , ժողովրդեան մէջ յեղեղուած անուն մը կորսնչի չէր հասարակաց բերէն իւրեւր զիւրութեամբ : Ըստ իս՝ համասօտ արձանագրութեամբ թղթի մը անկիւնը պատմական արժէքը նշանակելէն ետքը՝ մեր քրտինքով կանգնեալ եկեղեցին շատ դիւրութեամբ կրնայինք նուիրել մեր Պարթեւին , եւ այսպէս օտար սուրբով մը մեզ հասած չորս գարուց յիշատակն արձանագրութեամբ մէկ քով զնեղով՝ Մարմարայի վրայ կը բարձրացնէինք տաճար եւ հինգ գարուց՝ ազգային , գրական , եկեղեցական , մեծ , սուրբ , յաւիտ օրհնեալ եւ իսպառ բարեբանեալ յիշատակ մը :

Ասկէ զատ կը փափաքէի գիտել թէ արդեօք չնկեր՝ մեզ մեր հին պատմութիւնը . եւ մեր պապեր կը հաստատային մեր սրբոց , Հայ պատմագիտաց յայտնի է որ մեր Ներսէս

կային իր վարժապետին՝ Վարդան վարդապետի վերջին ազատարանէն (*) իր հայրենիքը գտնալէն մէկ տարի ետքը , — հաւանականաբար անոր մահուանէն վերջը , — 700 տարի առաջ կործանեալ Թիւն աւանի մէջ գտնուեցաւ Մեծին Ներսիսի մարմինը : Սարգսի արքեպիսկոպոսին՝ Նրզնկացոյն հօրը ձեռօք նշխարաց մէկ մասը կը փոխադրուի Իրզնկայ , եւ մաս մ'ալ Տիրաշէն բնակավայրը , Գալի գետոյն երկու ափունքը : Նշխարաց գիւղին ուրախաբանութիւնը կը հասնի մեր Լեւոն Գին , որ կը հրամայէ եկեղեցի մը կանգնել ի պատիւ մեծի Հայրապետին . իսկ Նրզնկացին ալ՝ այս գիւղաց ժամանակակից եւ ակամտեան՝ կը գրէ պատմութիւնը , եւ եկեղեցւոյն նաւակատեաց եւ օճման առթիւ ալ՝ ի պատիւ մեր պատմական հօր՝ կը գրէ գեղեցիկ շարական մը . « Որ զլոյս անձն չնորհաց աստ ուսած այլին քո զիտութեան » :

Թերեւս ըսենք թէ սրբոց համար ազգ եւ հայրենիք չկայ : Այո , բայց մեր կրօնական պաշտամունքը օտար եկեղեցեաց մէջ չենք կատարեր . քրիստոնէայ , այլ հայ անունն տակ կը պաշտենք զՔրիստոս . հայ եկեղեցին հայ սուրբերու պէտք է ըլլայ :

Արդ , որչափ որ հարկ էր իր մխրոցն ու աւերակացը վրայ բարձրացնել այդ տաճարը , նոյնչափ եւս հարկաւոր էր օտար անունն փոխանակել ազգային անուն մը , Սահակ Պարթեւ , եւ այս կարի պատշաճաւոր կ'ըլլար , այնու մտաւանդ որ նորաշէն եկեղեցւոյն թաղին մէջ Սահակ Պարթեւի անունը հեգարանին հետ կը ծանօթանայ հայ մանկան . հայ պատանին անոր հովանւոյն տակ կը սնանի՝ որ սնուէր անուանը սրբացեալ վարժարանին մէջ . իր անուանը տակ աղինք երիտասարդաց ընկերութիւն մը կանգ ուն կ'ապրի այսօր : Սամաթիացի տղան , վարժարանին մէջ Սահակեան ուսանող սան , վարժարանէն անդին՝ Սահակեան Սանուոց մէկ անդամն է : Ըստ այսմ ամեն զիւրութեամբ կ'արժէր որ Սահակ Վարթեւի անուամբ քրիստոնական խաչ մը իր չորս թեւերը պարզէր վարժարանին հետ Սամաթիայ ըլրակին վրայ իբրեւ հովանի այն գաղթական հայուն՝ որ թէպէտեւ բազում զոհեր տուած է անոցը կրակին ու ժամանակին՝ տակաւին լաւ հայ է . թէպէտեւ ծնած՝ սլ կը գործի իր հարց հաւատոյն , իր հարց լեզուին եւ անոց պատմութեանը :

ՀՐԱՆԴ

7 Յունիս 1887
Իւսկիւտար

(*) Հայոց եւ վրաց սահմանացը մօտ՝ Հաղբառ եւ Սանահին վանոց մէջ տեղը՝ կայնայ ձորը փոքրիկ վանք մը :

ԿԱԼՁԻՒ ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ՓՈՇԻՆ

ԱՄՆԱՆԱԶԻՐՈՒ ԴԵՂ Ս'Է ՄԼԵԿՆԵՐՈՒ , ԼՈՒԵՐՈՒ , ՈՋԻՆԵՐՈՒ , ՃԱՆՃԵՐՈՒ , ՄՃԵՂՆԵՐՈՒ , ՄՐՃԻՆԵՐՈՒ , ԹՐԹՈՒՆԵՐՈՒ , ԾՐԵՆԻ ՈՐԴԵՐՈՒ ԵՆԻ զԷՄ :

Քիչօն կը ծախուի 12 Ֆրանք . թըզթատարութեան միջոցաւ , 100 կրամն 1.95 Ֆր. է : Դիմելու է առ Է. ԿԱԼՁԻ , 71 Գուռ տ'Երպոնդիլ , Լիոն :

Արեւելից համար ներկայացուցիչն է Դեղագործական Մթերանոցն , Ղալաթիոյ Մեծ Փողոց , 55 , Կ. Պոլս :

796 4-10

ՍԻՐԱՅՐԻ ՏԵՏՐԱԿԸ

ՏԱՂԵ ԳԻՒՈՅՆ

Ո .

ՀՐԱՆԴԵՐՆ

Այո՛ , ծաղիկ , այո՛ , թըշուռն ,
Այո՛ , բուրմուռն , այո՛ , նըւադ .
Այո՛ , մայիս . . . »

— « Բայց . . . ի՞նչ կ'ուզես .

Ընդէ՛ր հակիս . ինչո՞ւ զէմբըդ ,
Ինչո՞ւ աչքըդ ձեռքդ դոցես . . . »

« Այո՛ մայիս , ի՞նչ քաղցր է բոյր .
Վարդ ինձ բերի , հըրդե՛հ բուրբան . . .
Ո՛հ , տար հեռու , սիրտս արդէն իսկ
Վառի՛ , վառի՛ . գընա՛ հեռու . . . »

« Ո՛ , զիս վանե՛ս . գիտե՛ս ո՞վ եմ : »

Վար առի ձեռքս , աչքըս բացի .
Շուրջս ո՛չ վարդ եւ ո՛չ ոք էր .
Եւ գերդ չէնքի մ'որ քայքայի՛
Նեցուկը՝ երկու թեւս համբարձի .
Նարէն գըլուխս ի ձեռս առի ,
Փակեցի զաչս . . . »

« Յետին նըւադ ,

Յետին նըւադ , ո՛հ , խօսիմ բեզ . . . »

Գլխէս կ'ենէր , սըրտիս կ'աղդէր
Խըռովից ձայնն այն հրաւիրակի :
Կամէի խոյս տալ իմ անձին :
Զիս հալածողն իմ անձս իսկ էր . . . »

« Մըտիկ ըրէ՛ : Պատուէ՛ թուղթ , գիրք .
Լաթերդ այրէ՛ , մերկ ելի՛ր դուրս .
Վարդի թերթից անհուն անդ մը
Կը տարածուի Մօտա - Պառնի .
Է կ'աւազածես այն , է՛ մեր դրոսիս ,
Պիտի բեզ հետ թաւայինը հոն
Վարդի թերթից սնկողնոյն մէջ :
Ու պուլպուլին երգ՝ մեր սրոր .
Ու պուլպուլին թեւք՝ մեզ վերմակ .
Եւ սիրոյ դաշտն աշիքան էրկայն ,
Որքան կաթին ծիրն ասաղացան .
Եւ սիրոյ դրոստ աշիքան է լայն
Որքան երկնից յարկը միացեալ . . .
Վերջին անգամ՝ կը խօսիմ բեզ ,
Ա՛լ յաւիտեան զբեզ կը թողու՛մ ,
Եթէ ձայնիս իմ չըլլես . . . »

Բայց ո՞յր ձայնն էր : Մետաղային
Առողջ ձայն մ'էր , որ . . . որ . . . սակայն
Մերթ նըւադէր . — դոցես անցնէր
Արտասուաց դառն աղբեր մէջէն ,
Կամ արիւնիս սրբի մէջէն ,
Կամ աղօթիկեր աչաց մէջէն . . .
Բացի նորէն աչքս մըթնած ,
Խուշն իմ թափուր է գերդ տապան . . .
Պատու հանէս դուրս տկն արկի —
Որթատուենկին վըրայ հակած ,
Թերթ կը քաղէ մեր դրոսային .
Մաքնիսն աչացըս վեր հանեց
Մերոյն գըլուխն , ինձ նայեցաւ .
Սառեցաւ մարդն իր կեցած տեղ ,
Ինձ նայեցաւ , ինձ նայեցաւ .
Մոռցաւ կարմիր մեծ թաշկինակն ,
Ուր գիզուէին դաւար թերթեր :
Ու մեծացաւ , ու մեծացաւ ,
Ծածկեց ըզմարդն եւ զօրթատուենկ ,
Այրեց մարդուն սեւ հաղուստե՛ք ,

Կանաչ հանգերձն երկրագլխին,
Կարմիր-արիւն այն թաշկինակն:
Այրի սիրտ իմ, այրի երկիր:
Ահ, ո՞ր փախչիմ արեգակն ալ
Հրկիզէ հող, ծով ու երկին . . .
Մարդն այրեցաւ, եւ լւր կը տալս
Աչաց խոռունկ խոռոչներով
Ինձ կը նայի, ինձ անքնթիթ,
Ու կը սոսկամ, ու կը փակեմ
Նորէն աչքերս արիւնալիր . . .

«Ծովին վերայ կապոյտ, անդորր,
Ուր արեգակն ընդ միշտ նընջէ,
Ընդ աստեղօք գեղանրչալ
Տարածանի մեր անկողին:
Արարչութեան առջի օրէն
Ես կը կարեմ այն անկողին,
Ուր մինչեւ վերջն արարչութեան
Պիտի նընջենք անքուն, անյագ . . .
Օ՛ն, մերկացիր, մայրդ ուրացիր,
Անիծէ՛ կեանքն եւ իւր օրէնք:
Այրի՛ սընտուկդ, ու քնարդ ալ
Կըտոր կըտոր, օ՛ն, դուրս նետէ՛:
Ու վար նետուէ պատուհանէդ
Վարդի թերթէ անկողնոյն մէջ . . .»

Ահ, ինչ ձայն է, ո՞ր աղջիկն է,
Բոսիկ ոտքով կը քայլէ շուրջ,
Կը քայլէ նա մերկ լանջքիս վրայ,
Եւ մաղերովն իւր խիտ ու սեւ
Ծածկէ՛ յաջացս արեւ եւ աստղ:
Ոչ ուրեք է . . . հոն է . . . ահա՛ . . .
Շտպիկ հագեր, ուղիւներդ է . . .
Եւ ուսին վրայ ճերմակ թըռչուն . . .

Կը բանամ աչքս, աղանձին եմ,
Մտի սենեկիս մէջ միս մինակ,
Ինչպէս մեռելն է շիրմին մէջ . . .
Դուրս կը նայիմ բոլրածեւ
Դաւարածէս բըլրոյն վրայ
Լայն ու սպիտակ ամպ մը ժըպտուն՝
Կապոյտ դաշտին մէջ ճերմակ լիճ՝
Սեւ սեւ աչաց ակնարկներէն,
Կարմիր վարդից բուրմունքներէն,
Ձը կարմրիր ու չը սեւնար . . .
Բայց . . . իւր ծոցէն . . . սեւ ագռաւ մը,
Կարմիր լաթ մը կըտուցի վրայ,
Առ իս սլանայ, ահա՛, ահա՛:
Ո՛ւր է, չը կայ . . . Ճակտիս վըրայ
Կարմիր լաթը, սառ ու կըրակ
Կարմիր լաթը, ճակտիս վըրայ:
Ճակտիս ետեւ՝ խաւարչըտին
Դըղեակին մէջ խորհրդաւոր՝
Սեւ ագռաւը պտոյտ պտոյտ,
Սեւ ագռաւը ոլորտապտոյտ:
Անսահման է գըղեակն անտես
Եւ անյատակ . . . պտոյտ, պտոյտ,
Ագռաւն երգէ, ուսերէս վեր,
Մաղերուս տակ, գըղեակին մէջ,
Մութ գըղեակին մէջ գիւարնակ,
Ոյր յատակն է սիրտս անյատակ . . .

Հանէ՛ ճակտէս, հանէ՛, մայր իմ,
Այն հուր ու սառ լաթը կարմիր:
Վերցնէ՛ր գլխոյս մեծ կափարիչն,
Որ անսահման ագռաւն ելնէ
Դըղեակէն դուրս, անտանէն դուրս,
Անդունդէն դուրս, տապանէն դուրս,
Գըլուխէս դուրս, ահ, թող ելնէ,
Ես պէտք ունիմ, պէտք հանդէլու:
Եւ անկողնին ալ պատրաստ է,
Վարդ անկողնին ու թեւ վերմակ
Մինչեւ ի վերջ արարչութեան . . .

Բ.

Ա Պ Ո Ա Ք

Սեւ են, սրածեւ, սրածայն,
Գըլխոյս մէջ է իւրեանց բոյն:
Յառաջ քան զայդն արթնցան,
Թեւաբախեն . . . Ահ, գըլուխ . . .

Ձգգիտեմ ե՛րբ մըտան հոն:
Ի Պէշիկթաշ, ի մեր տան,
Եոյն ունէին ծիծառնիկը,
Գըլխոյս վերեւ, ո՛չ յիմ գըլուխ . . .

Ի Պէշիկթաշ, ի Հասպիւզ,
Յառուրս անվիշտ մանկութեան,
Առնէին եւ մուտ յիմ սիրտ,
Թըռչունը աչխոյժ լուսաթեւ . . .

Հիմայ սեւ են, սոսկաւոր,
Կարմիր կեռասն ի կըտուց,
Դիակնաբոյժ, մըտանեն
Ի խորչս ամեն իմ գըլուխ . . .

Սեւ, գարշահոտ, ծանրուծանք,
Գըրաւած են ամեն խորչ:
Իբրեւ գնդակը կապարեայ
Գըրին կեռասը յիմ ի գըլուխ . . .

Ո՛չ, կեռաւ չէ՛՝ զոր ունին
Յիւրերանց կըտուց կորագործ:
Արիւնահոս սիրտեր են,
Թաւալին, լա՛ն յիմ գըլուխ . . .

Ճակտիս վըրայ տըրտիւն
Սըրտերն այն գեւ կենդանի,
Հարկանեն զայնս յար թեւը սեւ . . .
Երկրապարտ է, անթիւ, պեղում . . .

Ի գեւ փոխուն մերթ ագռաւ,
Բըրբըջ բառնան, բարկոծեն
Գանկիս սրմերն անկործան,
Անկանին վէժը գանկիս մէջ . . .

Ի խորս գանկիս չը հասնիր
Ժամ մը յետոյ մէն մի քար:
Այնքան է խոր գանկն իմ մութ,
Ուր բընակին սեւ ագռաւ . . .

Ագռաւ, դիակ, դեւ, մըտայլ,
Նոր տիեզերք մը ներքին,
Նոր տիեզերք մաշտադին,
Կըրեմ գանկիս մէջ անհուն . . .

Անցորդ աղջիկ, շարժուն կմախ,
Յերկինս հայիս, գի՛նջ խընդրես:
Ագռաւն, որ սիրտը խընց
— Գանկիս մէջէն սիրտդ, ե՛կ առ . . .

Գ.

ՊԼԱՌՅՍ ՍՏՈՒԲԵՐՆ

Այսօր գացի շէկաւով
Գըլխոյս ըստուերն ահագին
Պըտըտըտեւ ի Պոսթոր
Ջուրց հոտանաց մէջ կըրկին:

Կըրկին աչօքս հրրապառ,
Յեղք եւ ի ծոց Պոսթորին
Տեսանէի մութ խաւար
Գըլխոյս ըստուերն ահագին:

Անկուհի մը լուսադէմ,
Ծաղկահատակ, սիրագին,
Դիտէր աչօք երազուն
Գըլխոյս ըստուերն ահագին:

Ըստինք ունէր Անկուհին,
Սակայն կաթ տայր շոգեհաւ:
Գըլխոյս ըստուերն ահագին
Ծածկէր ըստինք, կաթ եւ չուրթ:

Նաւապետին հարցուցի:
«Ծանօթ է քեզ Անկուհին»:
Իսկ նա հարցուց. «Տեսանե՞ս»:
Գըլխոյս մ'ըստուերն ահագին»:

Գըլխոյս ըստուերն ահագին
Գըրաւէ աչք, միտք ամեն:
Թեոց վըրայ սոխակին,
Ըստեանց ներքեւ Անկուհւոյն:

Ի կաթնագոյնն ի վըրսուր,
Ի՛նչ բոցահուր ծոց վարդին,
Ամենուրեք բընակի
Գըլխոյս ըստուերն ահագին:

Դ.

ՋԱՆԿ ՈՒ ԳԱՆԿ

Իմ հէգ գըլուխ նըմանի՛
Եկեղեցւոյ գանդակին,
Հանապազօր հարկանի,
Եւ ոչ մաշի տակաւին . . .

Այլ . . . հէգ գըլուխ արոյրէն
Է, բաբէ՛, յոյժ, յոյժ տարբեր:
ԱՐՈՅՐԵՆ է զով մըշտօրէն
Լընու զարոյր նօսր եթեր:

Երկեցս յառաւել երբայ
Թեթեւօրէն, երգ ամառն:
Դողգողայ խաչ մ'իւր վերայ,
Նուրբ, երկնապիշ, լուսացան:

Առնին ու հոգին մեր լըսէ
Ջարոյրին սուրբ ձայնն աղու:
Խաղաղութիւն նա հոսէ,
Անտես ասուօք յոյս հեղու:

Իսկ ԻՄ ԳԼՈՒԽ հըրայրի
Հըրօք համայն գըթօխոց:
Կըտուցը հաւուց սեւ, վայրի,
Բացին ի նա բիւր խոր խոց:

Ոչ ոք լըսէ գանկիս ձայն:
Նիտկարան անդ գոռայ:
Ուրմաւանդէն սղիք զայն . . .
Ձի՛նչ, ահ, կըրեմ ուսոյս վրայ . . .

Ոչ քանդի գանկս ոչ մաշի,
Նըման՝ այսու՝ գանդակին:
Եւ դերդ զանգակ բոլորչի,
Ծընունդ հըրոյ, փայլակին . . .

Այլ . . . լըսէ՞ գանկն ըզդանչ իւր:
Ըզդայ՝ գանկն, երբ տատանի:
Երանի՛ քեզ, ո՛վ արայր:
Երբ քահանայն զիս տանի:

Պիտի հընչես նոյն ձայնով
Աղէկիկիկ լանխըռով . . .

Ե.

ԱՌ ՅԻՍՈՒՍ

Դու խաչն ուսիդ վըրայ տարիր, ո՛վ Յիսուս
Փայտեայ խաչ մը, եւ էր ուսը հաստատուն:

Դարուց մէջ ով լի գլուխ մը տանի՛մ ուն ,
Եւ սրբաբնիկ մէջ կրթմ' իստ մը ծանր, անհուն

Քու խաչդ էր կոյս՝ արեան հետքէ և լիւրջ .
Չայն միակ օր՝ երեսնամեայ՝ կըրեցիր :
Բիւր վկայից փութը և արիւն՝ յիմ խաչն՝ հո՛ծ .
Ի՞նչ թուան դարուց գըծ ի՛նչ տկար երկայն

Շարժէիր ցուպ դու , շարժեմ' ես գրիչ նուրբ .
Զօրանայր թեւդ , եւ իմ մատուցը մաշեցան .
Կոչեն զիս դու , անուանեցար սուրբ ու սուրբ .
Ոսկերէդ հանգչին , և լիցին իմ ցիր և ցան :

Ո՛վ երջանիկ Յիսուս , արտասուեցին զքեզ .
Հաւատացեալք բիւր լան ըզքեզ յաւիտեան ,
Երիտասարդն այժմ՝ արտասուէ աղեկէզ ,
Այլ չը գիտեմ ի՛նչ զոր ծածկէ մոթ գամ-

Գրեթէ խոտ կերար , իմ ճաշն է կաթ , միս .
Զգիտցար ի՛նչ է դեղն , յերակս իմ ի՛նչ
դեղք :

Տաճարէն դուրս հաղիւ ելար , մինչդեռ զիս
Յամեն մեհեանս յածեցուցին զիք և զեւք :

Քեզ ժըպտէին աստեղք , և հա՛րց ինձ առնեն :
Քեզ անծանօթ էին անդ ունդ և բարձունք .
Դու բըլեր մը կամ իշու մը վերայէն
Տեսնէիր զաշխարհն անբաւ ու խորունկ :

Եւ չը գիտեմ թէ՛ աչքս՝ որ ոչ էր մաշած՝
Երբեք անկա՛ւ հոգւոյ մը խորն , ու տեսա՛ր
Թէ՛ ո՞ր բնակի անդ , շամանթա՛ղ կամ՝ Աս-

Զո՞, վարդապետ , դու խնդրէիր սարէ սար ... :

Քան զաշխարհ քո շատ է հարուստ իմ խրո-
նակ ,

Եւ դանկու ունի յիսնակ խորքեր գըլայդ
չափ :

Սիրադ լընայր պարզ ըզդ ացում մը միակ ,
Ուղիք ըզդ ացմանց պեղեն ըզսիրտն իմ ան-
չափ :

Ըզսրխակաց կամ ըզվարդից ոչ խօսիս ,
Ո՛չ ունէիր ճաշակ գեղոյ բընութեան .
Զովկէանուն չը գիտեցիր զայն ալիս ,
Եւ չը հարցիր ի՛նչ է կաթին ծիրն երկայն :

Յերկինս ես այժմ , ես զայն զլսո՛յս մէջ
ունիմ ...

Միայն թէ գլուխս ուսիս վորայ ծանր է ,
ծանր ...

Իջիր յերկինգ , դուրս ե՛լ գըլսէս , Աստուած
իմ ...

Դուրս ել սըրտէս ... կամ դարձո՛ւր հոն
հաւատքն համր ... :

Մութ Մայիս

Մ Ի Խ Ա Ի Լ Լ Է Ի Մ Ո Ն Դ Ո Վ

(Շարանակո՛ւնէն Յանէն Թէ Ինէն և Քեք)

Դ.

Լէրմոնդովի խանդավառ երեւակայու-
թեան եւ ազատասէր ոգւոյն թարգմանը
միայն քնարերգակ աղբերը չեն . ստէպ բա-
նաստեղը դիւցազններգակ է , ինչպէս է
Նորընծային մէջ , ՆՈՐԸՆԾԱՅՆ նկարագիրն
է այն սիրոյն , որ Զերբէզին սիրտն յաւէտ
գամուած կը պահէ իւր լեզուներուն հետ :

Յափշտակած են Ռուսը Զերբէզ աղայ
մը , յանձնած վանքի մը կրօնաւորաց խնա-
մոցն , Հայրական սիրով կը խնամեն վանա-

կանք այդ կորիւնը : Կը յանձնեն իրենց
մէջէն ամենէն պատկառելի , ամենէն բա-
րեպաշտ , ամենէն գորովագութ ծերունիին ,
մեծցնել զնա եւ պատրաստել կրօնաւորու-
թեան : Եւ սակայն ի՛նչուր ամէն հոգա-
ծութիւն . անջնջելի են Զերբէզ աղուն մը-
տաց մէջ յիշատակներն այն պատկերաց ,
զորս տեսած է իւր լեզուներուն մէջ : Զեր-
բէզի զգացումներն իւր արեան հետ խառ-
նուած են :

Գիտէ՞ այդ աղան թէ ի՞նչ է անկախ
չերբէզ-պետն իւր քարածեռ ապարանին
մէջ . ո՛չ , այլ արիւնը կը խօսի : Եւ երբ
հանդարտ նստած միակ կ'ընէ քարեպաշտ
կրօնաւորին խրատներն , իւր ականջներուն
մէջ կը շառաչէ զէնքերու չափով . կը լսէ
այն ձայներն որ կը կոչեն զինքն իւր չեր-
բէզի անուամբ :

Նախընթաց երեկոյն աւուրն , յորում
պիտի մտնէ այլ եւս վանական կարգին մէջ ,
յանկարծ կ'աներեւութանայ գերդ առիւծ՝
որ կը կոտորէ իւր շղթայներն :

Այլ պիտի գտնէ՞ իւր ցեղն այդ ան-
ասման լեռանց մէջ , Լինգէն է , տկար եւ
ոգեսպաս . պէտք է կուռի ընդդէմ՝ յոդ-
նութեան , ընդդէմ՝ գիշերուան ցուրտին ,
ընդդէմ՝ օձերու , ընդդէմ՝ դաշտանաց : Եւ
օր մը վանականները կը գտնեն զնա խո-
խովի մը մէջ՝ կիսամահ : Կը գրկէն կը տա-
նին զնա վանքը , եւ դեռ հոգին չ'աւան-
դած , միշտ սէզ , միշտ աննկուն կը պատ-
մէ իւր արկածներն ծերունի կրօնաւորին ,
որ չէ յաջողած այլակերպել նորա մանկու-
թիւնը :

Բանաստեղծը միշտ իւր երեւակայու-
թեանը չ'ապստին՝ , այլ կը սիրէ լսել հին
աւանդութիւններն , իմանալ նոր գէպերն
եւ ամենը երգել . Լէրմոնդով անկողնա-
կալ է , որքան ալ սիրէ լեռնականներն ,
բայց եւ այնպէս բող մը չը նետեր նոցա
փայրագ բարբարոսութեանց վրայ :

ՀԱՃԻ-ԱՊՐԷԲ, մոռցնել կուտայ պահ մը
Ռուսաց գէ՛մ մարտնչող զիւցազուներն . եւ
կը պատկերացնէ այն լեռնականներն , որք
յիշեցնել կուտան թէ Աստուծոյ թողններն
են :

Տեսարանը Տաղստան է , Ճեմաթի մէջ .
կայ աննուած ժողովուրդ մը՝ որ երբեք
տուրք չէ վճարած տիրոջ մը . չէ հալա-
տակած ումբ եւ ոչ խոկ Եամիլի : Պատե-
րազմի գաշտն է իւր մզկիթը , իւր պատ-
նէշներն՝ դաշոյն ու սիրտ : Կովկաս ծա-
ղաց ի ծագոյ կը ճանաչէ Ճեմաթի գա-
ւակներն . երբ մին ի նոցանէ իւր հարուա-
ծոց թիրախ ընտրէ ուստի մը սիրտն , իւր
հարուածը երբեք չ'փրկւիր :

Երեկոյ մէ՛ . մութը կ'սխալ տիրել , լեռ-
նականը կը հաւաքուին եւ պատկառանք
իրենցմէ միայն ունին կը դնեն : Պատերազ-
մի խորհրդէրդ մէ՛ , յարձակման մը յատա-
կազմի՛ծ , թէ գիշերն յանկարծ Գազագնե-
րու վրայ յարձակելու պատրաստութիւն :
—Ո՛չ . ծերունի մէ՛ որ կ'սղոյս . խեղճ ծե-
րուկ մը , որոյ աղջիկը , գեղանի Լէյլան ,
առեւանգած է Զէյններու մի պետն : Գը-
թացէ՛ր յիս , սպեկտրը Ճեմաթի , Կով-
կասու արիագոյն զաւակներն . արդարու-
թիւն կը խնդրեմ' : Կա՛յ ձեր մէջ մէկը որ
ճանաչէ Պէզ-Պուլաթը : Պէզ-Պուլաթ խեց
աղջիկս իմ գրկէս . — Ի լուր այդ անուան
կը սարսափ երիտասարդ ասպետներէ մին :

«Կը ճանչեմ' , կ'ըսէ . փսա՛հ լեր յիս .
բնաւ հաճի Ապրէք ի զուր չէ աշտանակած
յիւր-ձին : Ինձ ապաստէ աստ երկու օր . թէ
որոշեալ ժամուն չտեսնես զիս վերադար-
ձած այլ եւս մի՛ սպասեր եւ աղօթէ Մար-
գարէին հոգւոյս համար :»

Սպաննած է Պէզ-Պուլաթ եղբայրն անոր
որ խօսեցաւ այսպէս , սպաննած էր փառա-
բար : Թէ մինչեւ ցարդ չէ լուծած վրէժը ,
կ'սպասէ բարեյաջող առթի մը , որպէս զի
կարենայ արժանաւոր փոխարէն մը հատու-
ցանել մարդասպանին :

Կը մեկնի Հաճի Ապրէք , բայց իւր նպա-
տակը չէ վերադարձնել Լէյլան իւր հօրը : Ո՛չ ,
պէտք է սպաննէ աղջիկն որպէս զի մարմո-
քի Պուլաթի սիրտն ի մահ իւր սիրաւորի
սիրելոյն :

Սարսափազդեցիկ եւ սրտապատու տե-
սարաններով ի հանդէս կ'ածէ բանաստեղ-
ծը թէ ի՛նչպէս Հաճի Ապրէք կը հասնի Պէզ-
Պուլաթի բնակարանն , թէ ի՛նչպէս կը
ցնծայ Լէյլայի սիրտը թէ իւր հօրմէն պի-
տի առնու լուրեր : Կը խօսի Ապրէքի հո-
գին ի տես դեղանի կնոջն . կը վարանի , չէ
կարող սպաննել զնա , բայց վրէժն աւելի
ազդու կը խօսի եւ կը վերադառնայ տուն
ու Լէյլաի ծերունի հօրը կը նուիրէ աղջը-
կան արիւնթաթախ գլուխն :

Այդ խուժուած տեսարաններու հան-
դէպ ուրիշ բարբեր եւս կը նկարագրէ բա-
նաստեղծը . կարելի է ըսել պատերազմա-
կան հովուերգութիւններ , այսպէս է Իս-
մայիլ պէյ չերբէզ երիտասարդ պետ մէ՛ .
Լեռնականաց առտին կռիւները կը հար-
կադեն զնա երթալ ապաստան որոնել Տա-
ղստանի Լէզիլի մը տունը . իւր ասպնջա-
կանին աղջիկը գեղեցիկ լէզիլուհին Սարա
սիրահարած է երիտասարդ չերբէզին : Այլ
պատերազմի շառաչիւններ կը հասնի մինչ ի
Տաղստան . Իսմայիլ կը թողու Տաղստան և
կը թափ իւր զինուց եղբայրներու բով :

«Մի՛ մեկնիր , կը սպալատի նա Սարա , բայց
Իսմայիլ պէյ կը պտտախառնէ չերբէզի եր-
գովն .
«Թէ կ'ուզես նշանուիլ , նշանածդ ըլլայ
սուրբ . թէ ունիս օժիտ մը , տո՛ւր զայն եւ
գնէ ձի մը :» Եւ կ'երթայ Իսմայիլ կը գտնէ
իւր ցեղն ինչպէս նաեւ անաղբեր ին-
խանձորդներն : Պէտք է մարտնչիլ Ռուսաց
դէ՛մ , մարտնչիլ իւր եղբոր Ռուսամ-պէյի
նենգութեանց դէմ : Եւ ի՛նչ պիտի ընէր
Իսմայիլ թէ անդ իւր մօտ չը գտնէր իւր
Սարան : Զինեալ , հրացան իյուս , սուրն ի
ձեռին Սարա միշտ Իսմայիլի հետ է : Եւ
Լերմոնդով հրաշալի կերպով կը նկարագրէ
անձնուիրութիւն կնոջ , խրոխտ անհոգու-
թիւն Իսմայիլի , ներքին երկպառակութիւնը ,
փայրենի հովուերգութիւն մը :

Բայց Կովկաս այն երկիրն է ուր ամէն
կրօնը ժամագիր եղած են . ո՛չ ապաքէն
անդ է ուր շատ եկեղեցիներու մէջ կը
տեսնուին քրիստոնեայ սրբոց արձաններն
որոց վրայ փորագրեալ են Ղուրանի տու-
ներն եւ անոնց բով հին կռապաշտութեան
աստուածներու արձանները : Լերմոնդով չի
մոռցու նաեւ քրիստոնէութիւնը , բայց
վրայի քրիստոնէութեան աւանդութիւննե-
րէն է , տեղի շտար Նորընծայն :

Բայց Լերմոնդովի համար իրի հայ չենք
կարող մասնաւոր երախտապարտութիւն մը
ունենալ , մանաւանդ ընդհակառակն : Եւ
մեզաւորը Լերմոնդով չէր : Սպայ բանաս-
տեղծն Ղարապաղ չէր անցած եւ չէր ճա-
նաչեր հայերն , մանաւանդ այնպիսի ժամա-
նակի մը հասած էր որ այլ եւս Հայք դա-
րեւոր դիւցազնութիւններէ վերջ արիւն-
նին սպառած կը ննջէին : Կովկասու մէջ հայ
չտեսաւ , ինչպէս որ պէտք էր տեսնել Տեք
սաւ միայն այն հայերն որք ամէն ուրեք կը

գտնուին, որոց նմաններն ամէն ուրեք կան, ամէն ազգի մէջ կան Տղրուկներ: Կերեւի թէ այդ հայերը մի մեծ զգուանք պատճառեցին վեհագի բանաստեղծին եւ մի տեղ իւր բոլոր թոյնը սրտին դառնութիւնը մի տողով կը թափէ: Հարւան մէջ է: Մայրը չուզէր զնա իւր որդին ճանաչել, նա մի վատ է եւ կը վռնաէ:

Տի տրուս, տի բաբ, տի չէրվ, տի Արմէնին, Իդի պրօշ, տի նէ մոյ սին:

(Դո՛ւ վատ, դո՛ւ ստրուկ, դո՛ւ սողուն, դո՛ւ չայ, — գնա՛ կորիւր, դո՛ւ չես իմ որդին):

Բայց ապագայն աւելի արդար եղաւ: Եկաւ օր մը յորում Ռուսիոյ, որ արդէն մեծ երախտապարտութիւններ ունէր Հայոց, տեսաւ թէ իւր ամենէն վատաւոր անուններուն մէջ կը փայլէին հայերն, եւ մինչեւ իսկ յետ կայսեր Ռուսիոյ առաջին մարդը մի հայ էր: Լէրմոնովի յիշատակին նախատինք մ'էր թողուլ այդ արիւնհարուստ արդէն, ուստի Ռուսք ջնջեցին զայն նոր տպագրութեանց մէջ: Այդ պատճառաւ է որ Փանոսեան Աղ. էֆի թարգմանութեան մէջ չտեսնուեցաւ նա:

Ե.

Գեւ երեսուն տարեկան չկար Լէրմոնովի երբ մեծահասակ մը մէջ փրատուած կը մեռնի: Սիրահարուած էր Կովկասու բնակին հրամանատարի աղջկան: Մեծ նըստիւնով է այդ սիրահարութեան: Անդ բանաստեղծն իւր զիւցաղուններն, իւր օգուտն պատկերը կ'ընէ: Կը նկարագրէր թէ ինչպէս սիրահարն ի մեծամարտի կը մեռնի անդունդի մը եզերքն: Ճիշդ բառ առ բառ օր մը կը գործողութիւն Լէրմոնովի գրածներն երբ Մարիինովի չեստ մեծամարտած կը մեռնի:

Ռուսիա գեւ Բուլքինի սուղը չի մոռցած նոր սուգի մը մէջ մնալ: Բայց եթէ ռուս մասնագէտութիւնը միշտ կ'ուրացայ այդ մեծ բանաստեղծին վրայ, որոց հանճարը եթէ լիովին զարդանալու ժամանակ ունենար պիտի լինէր մեր դարուն ամենէն մեծ անուններէ ինչ Կովկաս գուրգուրանօր կը խանդաղատի իւր երգչին փառաց: Ամէն ազգութիւն, ամէն կրօնը հաւատարմութիւն կը սիրեն Լէրմոնովը: Նորա արձանն վրայ ամենէն փառաւոր պատկերէն մին կը դրնէին հայը ձեռամբ օրիորդ Ալի-պէ կօֆի:

Կովկասու հանքային ջրերն նուիրուած են Լէրմոնովի յիշատակին: Պէտք է ֆորտ (հինգ լեւներ չէրքէրէն քէշտաւ) Կիւլֆօրտ (թթու ջուր) Նաբ զա (արքայաճուր) ժեկէշ-նովֆօրտ (երկաթի ջուր) Լեւնդալի, ամենքն ալ այլ եւս Լէրմոնովի անունն են: Աստ Լէրմոնովի բնարն է, անդ Լէրմոնովի տաւիլը: Բանաստեղծին օգին կը ծածուկի ամէն ուրեք: Նուաճող ու նուաճեալ կը խոնարհին հաւատարմութիւն:

Իցէ՛ թէ հայ բանաստեղծը Լէրմոնովի ամբողջ թարգմանութիւնը մեզ տային:

Ա. Ա.

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺ:

ՅԱՅՏԱԳԻՐ 1887-88 ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՍՆ

Սանասարեան Գիշերօթիկ Վարժարանն ունի Գերմանացոց Դաստիարակարան (Erziehungsschule) կոչուած Միջնակարգ Վարժարաններուն համահաւասար աստիճան, եւ անոնց պէս կը բաղկանայ ինը դասարաններէ (Ա.—Թ), որոց իւրաքանչիւրին ընթացքը կը տեւէ մէկ տարի: Ապագայում պիտի բացուի նաեւ մի մասնագիտական շրջան եռամեայ ընթացքով:

Վարժարանում կ'աւանդուին հետեւեալ ուսմունքները:

1. Կրօն (Սրբազան Պատմութիւն, Քրիստոնէական Վարդապետութիւն եւ Պատմութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ):
2. Պատմութիւն Ազգային, Օսմանեան եւ Ընդհանուր:
3. Աշխարհագրութիւն Բնական, Աստղագիտական, Քաղաքական եւ Վաճառականական:
4. Բնագիտութիւն (Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն, Հանքաբանութիւն, Երկրաբանութիւն, Բլանաբանութիւն եւ Տարրաբանութիւն):
5. Հայերէն Աշխարհաբար եւ Գրաբար:
6. Տաճկերէն:
7. Գաղղիերէն:
8. Անգլիերէն:
9. Գերմաներէն:
10. Ուսողութիւն (Թուաբանութիւն, Գրահաշիւ, Երկրաչափութիւն, Եռանկիւնաչափութիւն եւ Տոմարակալութիւն):
11. Գեղագրութիւն:
12. Գծագրութիւն եւ Նկարչութիւն:
13. Զայնական Երաժշտութիւն:
14. Գործիական Երաժշտութիւն (Դաշնակ եւ Զուլթակ):
15. Մարմնամարզ եւ Զմշկութիւն:
16. Գործնական պարարտութիւն (Պարարգպանութիւն, Կազմարարութիւն եւ ընդ):
17. Արհեստներ (Փականագործութիւն հանդերձ թիթեղնագործութեամբ եւ ատողձագործութիւն հանդերձ ձախարակագործութեամբ):

Գործիական Երաժշտութիւնը կ'սկսի Երրորդ դասարանում, Գրաբար Հայերէնը, Տաճկերէնն եւ Արհեստները՝ Զորորդում, Գաղղիերէնը՝ Հինգերորդում, եւ Անգլիերէնն ու Գերմաներէնն՝ Եօթներորդում:

Անգլիերէնն ու Գերմաներէնն եւ Գործիական Երաժշտութիւնն ու Արհեստները կ'ամաւոր են, իսկ միւս բոլոր առարկայները՝ պարտաւորիչ:

Աշակերտը կարող է ընտրել Անգլիերէն եւ Գերմաներէն լեզուներէն միայն մէկը, նոյնպէս միւս կամաւոր առարկայներէն միայն մէկն, այսինքն կամ Դաշնակ կամ Զուլթակ, կամ ո՛ր եւ է մի արհեստ:

Թէեւ ասկէ առաջ յայտարարուած էր որ մինչեւ Վարժարանիս սեպտեմբերի շնորհեան կ'անուցուիլն այլ եւս աշակերտ չը պիտի առնուի, սակայն Վսեմ. Հիմնադրին ըրած յատուկ կարգադրութեան շնորհիւ այս տարի եւս պիտի առնուին սահմանեալ թուով թոշակաւոր աշակերտներ եւ պիտի զեւեղուին Բ. դասարանում, որով Վարժարանս այն տարուան մէջ պիտի ունենայ Բ. Գ. Դ. Ե. եւ Զ. դասարանները:

Զրիալարժ աշակերտներուն որոշեալ թիւը լրացած լինելով՝ նորեր չեն առնուիր:

Թոշակաւոր աշակերտներուն ընդունելութեան պայմաններն են հետեւեալները:

1. Ընդունուելիք աշակերտին տարիքը լինելու չէ ութէն վար եւ տասնէն վեր հակառակ դէպքում տղան յետ կ'ուղարկուի:
2. Ընդունուելիք աշակերտը պէտք է բերէ իւր հետ ծննդեան, մկրտութեան, պատուատի եւ առողջութեան վկայականներ, ինչպէս նաեւ Օսմանիէ Բեդիւթեօն:
3. Աշակերտը պէտք է կանխիկ վճարէ Մուսթի համար միանուագ Օս. Ոս. 5 Տարեկան թոշակ » 20 Գործ. Երաժշտութեան կամ արհեստի համար, տրին » 5

ԾԱՆ.— Անցեալ տարուան Յայտագրում նշանակուած Թոշակի պայմանները թիւ աշակերտներուն համար կը մնան անփոփոխ, միայն թէ այն աշակերտներն՝ որոնք Գործ. Երաժշտութիւն եւ Արհեստ նոր պիտի սկսին, պարտաւոր են այդ առարկայներուն վերաբերեալ տուրքը վճարել այն 3րդ յօդուածին տրամադրութեան համաձայն:

4. Նշանակուած տարեկան վճարէն զատ ծնողք ստանձնելու չեն ուրիշ ո՛ր եւ է ծախք:

5. Եթէ աշակերտը տարուան ընթացքում ո՛ր եւ է պատճառով հանուի կամ բացակայ լինի Վարժարանէն, տրուած տարեկան վճարը չի կրնար յետ պահանջուիլ ծնողին կողմէն:

6. Ամառնային արձակուրդին, որ կ'ընկնի Յուլիսի կէսին եւ կը տեւէ մինչեւ Սեպտեմբերի 1ը, ծնողներն, եթէ ուղիւ կարող են առն առնիլ իրենց որդիներէն, բայց երթեւեկութեան ծախքն իրենց վրայ է: Իսկ Վարժարանում մնացողներուն համար յատուկ վճար չի պահանջուիր:

7. Աշակերտ սալ ցանկացողները պէտք է մինչեւ Օգոստոսի սկիզբը ծանուցանեն իրենց որոշումը Վարժարանիս Տեսչութեան:

8. Աշակերտներուն մուտքը տեղի կ'ունենայ Սեպտեմբերի 1էն մինչեւ 14ը:

9. Աշակերտներուն ընդունելութեան միակտողութեան պիտի առնուի ծանուցանելու կարգը:

Կարին, Մայիս 1887

Տեսչութիւն Սանասարեան Վարժրնի:
Յ. ՄԱՏԱՅԵԱՆ Ս. ՍՈՂԻԿԵԱՆ Գ. ԱՌՈՒԼԵԱՆ

Վարժարանին վերաբերեալ նամակներ պէտք է ուղարկուին:

Ա.Ն Տեսչութիւն Սանասարեան Վարժրնի:
Կարին

Direction du Collège Sanassarian
Turquie d'Asie Erzeroum

ԲԱՐԵԿԱՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ

ԴՐՔՈՅԿ ԲԺՇԿԱԿԱՆ

«Ը— հօփօթ—նէ+ Կր—նէան»

Աշխարհիւնք Տր. Յ. Ճ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Նմանաբուժական դրութեամբ յորինուած սոյն բժշկական գիրքն, իբր 300 երեսէ բաղկացեալ եւ մաքուր տպագրութեամբ Ալեքեւի տպարանէն լոյս ընծայեալ կը խօսի նմանաբուժական դեղոց եւ դարմանաց վրայ: Իւր տեսակին մէջ առաջին գիրքն է այն որ կը հրատարակուի ի թուրքիա:

Կը գտնուի Պոլսոյ ամեն հայ գրաւաճառաց քով, ի Պահչէ-Զաբու չրաւաճառ Պողոս աղայի խանութն եւ Բերաթիւնէի դիմաց, Յարութիւն Նալպանդեանի գրատունը:

Գին 15 դր. եւ 20 դր.

885

3—4

Վսեմ. Սրբաւարտան

Տնօրէն-Պատուոյստանառ

Լ. ՏԱՄԱՏԵԱՆ:

ՏՊԱԳ. ԱՐԵՎԻԿ ԵՎ ՄԱՐԿՍ ԼՐԱՅՐԱՅ